AEB Mobile և AEB Online Banking

Ֆինանսական զեղծարարությունները և խաբեությունները գնալով դառնում են ավելի բազմաբնույթ: Ուստի բարձր որակի ծառայություն մատուցելու, տեղեկատվական սպառնալիքներից պաշտպանվելու համար Ձեզ ենք ներկայացնում անհրաժեշտ տեղեկատվություն, որը կօգնի լինել առավել անվտանգ և պաշպանված:

AEB MOBILE ***հավելվածի անվտանգ մուտք***

AEB Mobile համակարգը մշակված է «ՀԱՅԷԿՈՆՈԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) հաճախորդներին հավելվածի միջոցով գործարքներ կատարելու հնարավորություն տալու նպատակով: Համակարգից օգտվող հաճախորդները առանց բանկ այցելելու կարող են կառավարել բանկային հաշիվները 24/7 ռեժիմով՝ ցանկացած պահի, ցանկացած վայրից:

1) Ներբեռնված հավելվածի իրական տեսքը հետևյալն է.



Նկ. *1.*

Կեղծված տարբերակներում հաճախ լինում են ավելորդ նկարներ կամ տվյալներ լրացնելու այլ հատվածներ:

Որոշ կազմակերպություններ, անհատներ, ներկայանալով որպես միջնորդ վարկային ընկերություններ կամ բանկի կողմից գործակալներ, մոլորության մեջ են գցում քաղաքացիներին՝ առաջարկելով տարբեր ծառայություններ, ներառյալ Բանկի որևէ մասնաճյուղում բանկային հաշիվ բացելուց, ծառայությունների համար վճարումներընդունելուց և Mobile Banking-ի Ձեր մուտքանունը /գաղտնաբառը իրենց տրամադրելուց և այլ:

2) Ոչ մի պարագայում մի՛ հավաքեք Ձեր հավելվածի գաղտնաբառը կասկածելի, իրականից տարբերվող տեսք ունեցող հավելված մուտք գործելու համար:

Նկ. 2. Իրական հավելվածի մուտքի էջ

Նկ. 3. Կեղծ հավելվածի մուտքի էջ



Նկ. 4. Կեղծված տարբերակ, որում ավելորդ պատկերներ կան

*AEB Online **հավելվածի անվտանգ մուտք***

AEB Online Banking համակարգը մշակված է «ՀԱՅԷԿՈՆՈԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) հաճախորդներին ինտերնետի միջոցով գործարքներ կատարելու հնարավորություն տալու նպատակով: Համակարգի օգտագործողները (հաճախորդներ՝ ԻԱ, ԱՁ, ՖԱ) առանց բանկ այցելելու կարող են կառավարել բանկային հաշիվները 24/7 ռեժիմով՝ ցանկացած պահի, ցանկացած վայրից:

AEB Online Banking համակարգին միանալու համար անհրաժեշտ է **Ինտերտետի բրաուզեր և Ինտերնետ կապ**:

ՄՈՒՏՔ ՀԱՄԱԿԱՐԳ

Եթե հանդիսանում եք բանկի ԻԱ հաճախորդ և համակարգի օգտատեր եք, ապա ինտերնետ բրաուզերում մուտք եղեք https://newonline.aeb.am հղումով կամ Բանկի կայքէջ (https://www.aeb.am/) մուտք գործելուց հետո ընտրեք AEB ONLINE ծառայությունը, ապա բացված պատուհանում լրացրեք Ձեր **էլ. փոստի հասցեն**, **որը ներկայացրել եք բանկ գրանցման համար**, **այն Ձեր մուտքանունն է** , **ապա Գաղտնաբառը** /ժամանակավոր գաղտնաբառ, որը բանկից ստանալուց հետո պետք է փոխի

Օգտագործողը, ըստ պահանջված ֆորմատի/ և սեղմեք **Մուտք** կոճակը (*Նկ. 5*):



Նկ. *5*

Շատ կարևոր է ուշադրություն դարձնել հղմանը, այն պետք է սկսվի հետևյալ կերպ՝



Ոչ մի դեպքում մուտք մի՛ գործեք, AEB Online Banking այլ կայքերում դրված հղումներից:

Եթե որևէ առևտրային կայքում վճարում կատարելու նպատակով Ձեզ խնդրում են անցնել կցված հղումներով կամ սեղմել կցված AEB տարբերանշանի վրա, որով իբրև կկարողանաք ավելի հեշտ ու արագ մուտք գործել AEB Online Banking հարթակ, ապա մի անցեք այդ հղումներով և մի հավաքեք մուտքանուն/գաղտնաբառ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հնարավոր զեղծարարություններից խուսափելու համար.

- Մի՛ տեղադրեք Ձեր քարտի տվյալները կասկածելի կայքերում: Սոցիալական ցանցերում հղումները ավտոմատ տանում են մի տեղ, որտեղ մեկ հպումով/քլիկով կարող եք նրանց տրամադրել Ձեր անձնական ողջ տեղեկատվությունը: Օգտվե՛ք այնպիսի կայքերից, որոնք սկսվում են https:// գրառումով, քանզի վերջին s տառը կայքի ապահովության երաշխիքն է (security): Ստուգե՛ք, ապա նոր վստահեք:
- Մի՛ տրամադրեք այլ անձանց Ձեր անձնական (անուն, ազգանուն, ծննդյան օր,ամսաթիվ և/կամ հասցե) կամ ֆինանսական (վարկային/դեբետային քարտի տվյալները (այդ թվում՝ PIN-կոդը) տվյալները: Եթե Ձեզ զանգահարող անձը ներկայանում է որպես բանկի աշխատող, ապա նրա հետ ստուգե՛ք Ձեր հաշվի վերաբերյալ տեղեկությունները:
- Երբեք մի՛ պատասխանեք կասկածելի sms հաղորդագրություններին: Ստուգե՛ք հեռախոսահամարը, որից եկել է հաղորդագրությունը: Եթե դա Բանկից է՝ զանգահարե՛ք Բանկի շուրջօրյա գործող 86-86 հեռախոսահամարով և պարզաբանե՛ք Ձեզ հուզող հարցերը:
- Խուսափե՛ք անհայտ անձանց կամ անձանոթ կազմակերպություններին անձնական տվյալներ տրամադրելուց. ո՛չ հեռախոսազանգով, ո՛չ նամակով կամ էլ. փոստով, ո՛չ սոցիալական ցանցերով:
- Ձերծ մնացե՛ք միջնորդ կազմակերպությունների կամ անհատների կողմից մատուցվող ծառայությունների օգնությունից, մի՛ տրամադրեք Ձեր անձնական տվյալները, անձը հաստատող փաստաթղթերը, մոբայլ հավելվածի տվյալները երրորդ անձանց կամ կազմակերպություններին՝ ձեր փոխարեն լրացնելու վարկային հայտեր կամ ձեռք բերելու բանկային ծառայություններ՝ հեռահար հաղորդակցության միջոցների կիրառմամբ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԷԿՈՆՈԲԱՆԿ» ԲԲԸ երբեք չի դիմի Ձեզ՝

- քարտի PIN-կոդ կամ գաղտնաբառ տրամադրելու խնդրանքով,
- քարտի դարձերեսին գտնվող անվտանգության եռանիշ ծածկագիրը (CVC) տրամադրելու խնդրանքով,
- SMS-ով կամ էլ. փոստով եկած մեկանգամյա հաստատման կոդերի տրամադրման խնդրանքով,
- Մոբայլ բանկինգ հավելվածի գաղտնաբառը տրամադելու խնդրանքով,
- իբրև անվտանգության նկատառումներով հաշվի գումարը մեկ այլ հաշվի տեղափոխելու առաջարկով: